



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

☒ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-28-77

թիվ \_\_\_\_\_

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2017թ.

<<Ետաքննող լրագրողներ> հ/կ նախագահ  
պարոն Է.Բաղդասարյանին

Ձեր 20.06.2017թ. թիվ HQ-17-06/13 գրությանը  
Հարգելի պարոն Բաղդասարյան

ՀՀ Լոռու մարզում մարզպետարանի պատվիրատվությամբ և պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող դպրոցաշինական բոլոր ծրագրերը՝ համաձայն ՀՀ նախագահի «ՀՀ մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի, մարզպետին վերապահված իրավասությունների շրջանակներում շինարարական աշխատանքները սկսվելու պահից ուսումնասիրվում և վերահսկվում են մարզպետարանի քաղաքաշինության վարչության աշխատակիցների և տեխնիկական հսկողություն իրականացնող կապալառու կազմակերպությունների կողմից: Եթե առկա են թերություններ, հայտնաբերվում են անմիջապես՝ շինարարական աշխատանքների կատարման ընթացքում և առաջարկություններ են արվում դրանց վերացման ուղղությամբ: Բացի այդ, մարզպետի որոշմամբ ստեղծված պետական բյուջեով ֆինանսավորվող ավարտված շինարարական օբյեկտները շահագործման ընդունող հանձնաժողովը մարնրակրկիտ ստուգում է շահագործման հանձնվող օբյեկտներում կատարված աշխատանքների որակը և դրանց համապատասխանությունը նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պահանջներին, որից հետո միայն օբյեկտը ընդունվում է շահագործման:

Մարզպետարանում քննարկվել է «Հետք» էլեկտրոնային կայքէջի ս.թ. ապրիլի 25-26-ի հրապարակումը, համապատասխան հանձնախումբը այցելել է մատնանշված դպրոցները, պարզել թերությունների առաջացման ժամկետներն ու պատճառները: Ներկայացնում են ուսումնասիրության արդյունքները.

### **1. Վանաձորի թիվ 6 հիմնական դպրոց:**

Դպրոցը բաղկացած է 6 մասնաշենքից, ունի 4757քմ ընդհանուր մակերես, շահագործման է հանձնվել 1978 թվականին: 2013 թվականին մարզպետարանին հատկացված 11113.0 հազ. դրամ գումարի շրջանակներում վերանորոգվել են դպրոցի 2 մասնաշենքերի տանիքները: 2014թ. հատկացված 12449.0 հազար դրամ գումարի շրջանակներում նորոգվել է 1 մասնաշենքի տանիքը: Առաջնահերթ վերանորոգվել են դպրոցի 3 մասնաշենքերի տանիքները՝ նպատակ հետապնդելով ապահովել մասնաշենքերի երկարակեցությունը եւ պահպանել անձրեաչրերի եւ ձնհալների ազդեցությունից: ՀՀ կառավարության 07.02.2013թ. թիվ 130-Ն որոշմամբ նախատեսված գնումները կատարվել են բանակցային ընթացակարգով, առանց հայտարարության եղանակով՝ առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի եւ «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության թիվ 168-Ն որոշման պահանջներով: Մրցույթների արդյունքում կապալառու կազմակերպություն է ճանաչվել «Անդրեսայանշին» ՍՊ ընկերությունը: Մարզպետարանի համապատասխան վարչության աշխատակիցների կողմից այց է կատարվել թիվ 6 դպրոց, որտեղ դպրոցի փոխտնօրենների հետ համատեղ քննարկվել է «Հետք» էլեկտրոնային կայքէջում պատկերված առաստաղների վիճակը: Քննարկման արդյունքում պարզվել է, որ նշված թերություններն առաջացել են մինչեւ մարզպետարանի կողմից տանիքների վերանորոգումը եւ մինչ օրս վերանորոգման եւ հարդարման աշխատանքներ չեն իրականացվել: Փոխտնօրենի այն հայտարարությանը, թե վերանորոգումից երկու տարի հետո տանիքները սկսել են կաթել, չի համապատասխանում իրականությանը: Թիվ 6 դպրոցի մյուս 3 մասնաշենքերի մասնակի վերանորոգման աշխատանքները կատարվել են ՀՀ քաղաքաշինության նախարարության պատվերով: Ներկա դրությամբ դպրոցն ունի ներքին հարդարման եւ վերանորոգման կարիք:

### **2. Վանաձորի թիվ 12 հիմնական դպրոց:**

Դպրոցը գործում է նախկին մանկապարտեզի շենքում եւ ունի 1738քմ մակերես: 2011թվականին մրցույթի արդյունքում կապալառու ճանաչված «Ռ.Հովհաննիսյան» ՍՊ ընկերությունը 10200.0 հազ.դրամ գումարով իրականացրել է տանիքի նորոգման աշխատանքները: 2012թվականին «Զեռուցող» ՍՊ ընկերությունը 11330.0 հազ.դրամ գումարով իրականացրել է ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքները: 2014թվականին «Շին-Շարմուն» ՍՊ ընկերությունը 8800.0 հազ.դրամ գումարով իրականացրել է տանիքի նորոգման աշխատանքները: Նշված աշխատանքների առաջնահերթությունը քննարկվել է դպրոցի տնօրինության հետ: Ներկայումս դպրոցն ունի հիմնանորոգման կարիք:

### **3. Շահումյան համայնքի միջնակարգ դպրոց:**

2014թվականին մարզպետարանին հատկացված 14800.0 հազ.դրամ գումարով «Հ. Պողոսյան» ՍՊ ընկերությունն իրականացրել է Շահումյան համայնքի միջնակարգ դպրոցի տանիքի վերանորոգման աշխատանքները: Ներկայումս դպրոցն ունի հիմնանորոգման կարիք:

#### **4. Արեւաշող համայնքի միջնակարգ դպրոց:**

2014թվականին մարզպետարանին հատկացված 33200.0 հազ.դրամ գումարով «Մ. Սիսակյան» ՍՊ ընկերությունն իրականացրել է Արեւաշող համայնքի միջնակարգ դպրոցի 3 մասնաշենքերից մեկի ամբողջական վերանորոգման եւ հարդարման աշխատանքները: Դպրոցը կարիք ունի մյուս երկու մասնաշենքերի վերանորոգման:

#### **5. Խնկոյան համայնքի դպրոց:**

Խնկոյան համայնքի դպրոցը տեղակայված է 593.2քմ մակերեսով երեք մասնաշենքից բաղկացած մանկապարտեզի համար կառուցված շենքում, որը կառուցվել է 1980թվականին: 2009-2010թթ. մարզպետարանին հատկացված 83600.0 հազ դրամ գումարով «Մ. Սիսակյան» ՍՊ ընկերությունն իրականացրել է հարթ տանիքը երկթեք տանիքով փոխարինելու եւ ներքին հարդարման մասնակի վերանորոգման աշխատանքներ: Տեսանյութում նկարահանված թերություններն առաջացել են հիմնանորոգումից հետո 7 տարվա շահագործման ընթացքում: Ներկայումս դպրոցը կարիք ունի ներքին հարդարման:

Վերը նշված դպրոցները վերանորոգվել են Լոռու մարզին հատկացված հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների շրջանակներում տրամադրված գումարի սահմաններում: Գումարների սահմանափակ լինելու պատճառով շինարարական աշխատանքների առաջնահերթությունն ուղղվել է շենքերի երկարակեցության ապահովմանը:

Դպրոցների լիարժեք հիմնանորոգման համար պահանջվում են մեծ ծավալի ֆինանսական ներդրումներ, ինչը բնականաբար հնարավոր չէ իրականացնել հրատապ ծրագրերի շրջանակներում:

Լոռու մարզի վերանորոգման ենթակա դպրոցների ցանկը մեր կողմից ներկայացվել է մարզի միջնաժամկետ ծախսային եւ դպրոցաշինությանն ուղղված այլ ծրագրերում, որտեղ ներառված են վերոնշյալ դպրոցները:

Միևնույն ժամանակ տեղեկացնում եմ, որ նշված տեսանյութի վերաբերյալ իմ 05.05.2017թ. թիվ 101/116.1/2165-17 գրությամբ տեղեկացվել է «Հետք» լրատվական թերթի խմբագրությանը:

Մ Ա Ր Զ Պ Ե Տ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ